ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

23 Մայիս 2016թ No 1547-Ա

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ «ՎԱՐԴՀՄԱՆ ԷՔՍՊՈՐՏՍ, Ա-188, Տ.Տ.Ց., ՄԻԴՑ ԻՆԴԱՍՏՐԻԱԼ ԱՐԵԱ, ԿԱԻՐԱՆԵ, ՆԱՎԻ ՄՈՒՄԲԱԻ-400 710» ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ՍՊԻՐՈՆՈԼԱԿՏՈՆ 25, 25ՄԳ ԹԱՂԱՆԹԱՊԱՏ ԴԵՂԱՀԱՏԵՐ ԲԼԻՍՏԵՐՈՒՄ» ԴԵՂԻ T24501 ՍԵՐԻԱՅԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԵՏՀԱՎԱՔԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N1300-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետը, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2012 թվականի փետրվարի 24-ի N303-Ա հրամանով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետությունում դեղերի, դեղանյութերի, բժշկական նշանակության այլ արտադրանքի և կենսակտիվ սննդային հավելումների շրջանառությունը դադարեցնելու և շրջանառությունից հանելու (հետկանչի) կարգը, հետկանչի մասին ահազանգի ծանուցման և հետ կանչի իրականացման վերաբերյալ տեղեկատվության ձևերը հաստատելու մասին» կարգի 3-րդ կետը, ինչպես նաև «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի եզրակացությունը դեղի՝ Հայաստանի Հանրապետությունում հաստատված սպեցիֆիկացիային «նկարագրություն» կետին չհամապատասխանելու հանգամանքը (դեղահատերից ոչ բնորոշ տհաճ հոտի առկայությունը).

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Դադարեցնել «Սպիրոնոլակտոն 25, 25մգ թաղանթապատ դեղահատեր բլիստերում» դեղի («Վարդհման Էքսպորտս, Ա-188, Տ.Տ.Ց., ՄԻԴՑ Ինդաստրիալ Արեա, Կաիրանե, Նավի Մումբաի-400 710,» դեղագործական ընկերության) T24501 սերիայի Հայաստանի Հանրապետությունում շրջանառությունը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին՝

1) ապահովել մասնագիտական և պաշտոնական զանգվածային լրատվության միջոցներում համապատասխան տեղեկատվության հրապարակումը:

3. «Թեոֆարմա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝

1) Ապահովել սույն հրամանի առաջին կետում նշված դեղի T24501 սերիայի շրջանառության դադարեցումը Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում և հետ հավաքումը՝ այդ մասին տեղեկատվություն տրամադրելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը:

4. «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Հ.Թոփչյանին՝

1) սահմանված կարգով ապահովել հետհավաքման գործընթացի համակարգումը և արդյունքների մասին տեղեկացնել ՀՀ առողջապահության նախարարություն:

5. ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի քարտուղարության պետ Զ. Դարբինյանին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի օրինակի հանձնումը սույն վարչական ակտի հասցեատերերին:

Ա.ՄՈՒՐԱԴՅԱՆ